ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ պետական եկամուտների կոմիտեի 2022 թվականի մարտ ամսվա գործունեության վերաբերյալ

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2022 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 9,325.3 մլն դրամ՝ պլանավորված 7,500 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 24.3 տոկոսով կամ 1,825.3 մլն դրամով: Հավաքագրված եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ գերակատարվել են 95 տոկոսով կամ ավել է հավաքագրվել 4,543.3 մլն դրամ:

Մարտ ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 4,384.2 մլն դրամ՝ պլանավորված 3,200 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 37 տոկոսով կամ 1,184.2 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում հաշվառվել է թվով 71, լուծարվել՝ 3 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել են պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության և լուծարային 3 ստուգումներ, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են 14,3 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ:

Հարկային կարգապահության բարելավման ծրագրի շրջանակներում մարտ ամսվա ընթացքում իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների ճշտության 60 ստուգում, որոնց արդյունքում արձանագրվել են խախտման 39 դեպքեր՝ 2,9 մլն դրամ գումարի չափով:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 58 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 28-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 9-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի ու դրոշմավորման կանոնների պահպանման, 9-ը՝ ԱՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 19-ի N 336-Ա որոշմամբ հաստատված միջոցառման 8-րդ կետով նախատեսված վնասի չափի հիմնավորվածության

ճշտության, 7-ը՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության և 5 այլ ուսումնասիրություններ:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 8,836 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 8,702:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 37 պայմանագրեր:

Հաշվետու ամսում «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ կայացվել և ուժի մեջ են մտել հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չկատարված պարտավորությունների գանձման 41 որոշում՝ 470,1 մլն դրամ գումարի չափով, ԱՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ներկայացվել հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չկատարված պարտավորությունների գանձման 2 որոշում՝ 3,5 մլն դրամ գումարի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ԼՂՀ օրենսգրքով սահմանված կարգով քննված 64 վարչական գործով նշանակվել է 640,0 հազար դրամ գումարի չափով վարչական տուգանք:

Հարկ վճարողների ձեռնարկատիրական վարկերի (փոխառությունների) և տոկոսների փոխհատուցման նպատակով վճարված հարկերի գումարի վերադարձի ծրագրի շրջանակում հաշվետու ամսում կատարվել է 15,8 մլն դրամ գումարի չափով վերադարձ:

Հիպոտեկային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում 1-ին եռամսյակի ընթացքում կատարվել է վերադարձ 9 վարձու աշխատողի՝ 3,4 մլն դրամ գումարի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 5 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

2022 թվականի հունվար-փետրվար ամսվա ընթացքում ԱՀ տարածք են ներմուծվել 17,687.2 մլն դրամ գումարի չափով ապրանքանյութական արժեքներ, արտահանվել՝ 11,161.6 մլն դրամ գումարի չափով ապրանքանյութական արժեքներ, այդ

թվում՝ փետրվար ամսվա ընթացքում ներմուծվել են 10,816.3 մլն դրամ գումարի չափով ապրանքանյութական արժեքներ, արտահանվել՝ 7,781.4 մլն դրամ գումարի չափով:

ԱՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 19-ի N 336-Ա որոշման համաձայն՝ հաշվետու ամսում շարունակվել է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմական գործողությունների հետևանքով կրած նյութական վնասի չափի վերաբերյալ տեղեկանք տրամադրելու նպատակով հարկ վճարողներից դիմումների ընդունման գործընթացը, որի շրջանակում տրամադրվել են 7 տեղեկանքներ, մերժվել՝ 1 դիմում:

ԱՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել ««Հարկերի մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը:

ԱՀ ՊԵԿ նախագահի հրամանով փոփոխություններ են կատարվել մի շարք հաշվետվությունների ու տեղեկանքների ձևերում:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

Հաշվետու ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում իրականացվել են ԱՀ հարկ վճարողների կողմից ՀՀ մաքսային սահմանով կատարված ներմուծումների, արտահանումների, ՀՀ և ԱՀ սուբյեկտների միջև իրականացված գործարքների, անուղղակի հարկերի հաշվանցումների, ինչպես նաև հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

2022 թվականի 1-ին եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 1216 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի և զանգվածային այլ լրատվամիջոցներով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները,

հրապարակվել հարկ վճարողների կողմից առավել հաճախ բարձրացված հարցերի պատասխան-պարզաբանումները:

«Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ԱՀ օրենքին համապատասխան՝ Զինծառայողների ապահովագրության հիմնադրամից վերադարձ ստանալու նպատակով պատրաստվել և վարձու աշխատողներին ու անհատ ձեռնարկատերերին է տրամադրվել վճարված դրոշմանիշային վճարների չափի մասին թվով 299 տեղեկանք:

Մարտի 9-ին և մարտի 23-ին կազմակերպվել են հարկային ծառայության «Բ» և «Գ» խմբերի թափուր պաշտոններ զբաղեցնելու համար բաց և փակ մրցույթներ (այդ թվում՝ կրկնակի), որոնց արդյունքներով հաղթող ճանաչված 24 մասնակիցներ նշանակվել են հարկային ծառայության պաշտոնների:

Մարտ ամսվա ընթացքում հարկային մարմին է մուտքագրվել 476, ելքագրվել՝ 319 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրության դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 5 գրություն, որից 1-ը՝ էլեկտրոնային եղանակով: